ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Միրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1 Քարտեզում նշված ո՞ր կետի կոորդինատներն են հս. լ. 45°, արմ. երկ. 5°:



1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

2 Քանի՞ ժամային գոտիների է բաժանված երկրագունդը:

1) 66
2) 5
3) 15
4) 24

3 Մթնոլորտի՝ երկրի մակերևույթին մոտ (երկրամերձ) շերտում ջրի մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է՝

1) ցող
2) ամպ
3) մառախուղ
4) եղյամ

4 Տրվածներից ո՞րն է Երկրի մակերևույթը փոփոխող ներքին (ներծին) ուժ համարվում:

1) սառցադաշտը
2) քամին
3) հոսող ջուրը
4) երկրաշարժը

2011 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Աշխարհագրություն

Եղե՛ք ուշադիր *Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն այունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Դասասխանի համարը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Դասասխանի համարը

	21	22	23	24	25	26
1	☐	☐	☐	☐	☐	☐
2	☐	☐	☐	☐	☐	☐
3	☐	☐	☐	☐	☐	☐
4	☐	☐	☐	☐	☐	☐

Միասի նշված պատասխանները վերանելու տեղը

1	☐	☐
2	☐	☐
3	☐	☐
4	☐	☐

Փոխված պատասխանների քանակը ☐

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Առաջադրանքի համարը

27		32	
28		33	
29		34	
30		35	
31		36	

Լրացնում է ստուգողը

Ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները

37	38	39	40
☐	☐	☐	☐

Հանձնաժողովի անդամներ՝

1. .....

2. .....

Հանձնաժողովի նախագահ՝

.....

Միավորների գումարը	
Գնահատականը	

38 Հիմնավորեք ինչո՞ւ է օդի ջերմաստիճանի տատանումների օրական լայնույթը ջրավազանների վրա փոքր, իսկ ցամաքների վրա՝ մեծ:

(39-40) Երկրի տարածքը կազմում է 40 000 կմ^2: Բնակչության թիվը 4 000 000 մարդ է, որից քաղաքային բնակչությունը կազմում է 2 000 000 մարդ:

39 Որոշեք այդ երկրի ուրբանիզացման մակարդակը:

40 Որոշեք այդ երկրի բնակչության միջին խտությունը:

5 Լուսնի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացումը կոչվում է՝

1) մակընթացություն
2) օվկիանոսային հոսանք
3) ցունամի
4) տեղատվություն

6 Նկարում ո՞ր տառով է նշված մթնոլորտային ճնշման ամենաբարձր ցուցանիշն ունեցող վայրը:



1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

7 Տրվածներից ո՞րն է աշխարհի ամենամեծ կղզին:

1) Գրենլանդիան
2) Շրի Լանկան
3) Նոր Գվինեան
4) Մադագասկարը

8 Տրված անապատներից ո՞րն է գտնվում հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտում:

1) Գոբին
2) Սահարան
3) Ռուբ Էլ Խալին
4) Կալահարին

9 Այդ բնական զոնան տարածվում է միայն հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու դրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Տարածված են մամուռներ ու քարաքոսեր: Ո՞րն է այդ բնական զոնան:

1) տափաստանը
2) տայգան (փշատերև անտառներ)
3) սավանան
4) տունդրան

10 **Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Դեկանի սարահարթի հիմքում ընկած է երիտասարդ Արաբական պլատֆորմը:
2) Մայրցամաքը կազմավորվել է մի քանի հնագույն պլատֆորմների ու ծալքավորված գեոսինկլինալների միացման հետևանքով:
3) Ալպ- Հիմալայան լեռնային գոտում են գտնվում մայրցամաքի բարձր, երիտասարդ լեռներն ու բարձրավանդակները:
4) Մայրցամաքի ընդարձակ հարթավայրերը համընկնում են պլատֆորմային շրջաններին:

11 **Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի (բնակավայրերի ցանց) կոչվում է՝**

1) տարաբնակեցում
2) ուրբանիզացիա
3) դեպոպուլյացիա
4) միգրացիա

12 **Ուրբանիզացման մակարդակը ցույց է տալիս՝**

1) քաղաքային և գյուղական բնակչության թվերի տարբերությունը
2) բնակչության խտությունը
3) քաղաքային բնակչության բաժինը երկրի ընդհանուր բնակչության թվում
4) ծնելիության և մահացության ցուցանիշերի տարբերությունը

13 **Տրված «ժողովուրդ - ազգային (տեղական) կրոն» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) չինացիներ - կոնֆուցիականություն
2) ճապոնացիներ - հինդուիզմ
3) հրեաներ - սինթոիզմ
4) հնդիկներ - հուդայականություն

14 **Ո՞ր երկրին է բնորոշ հետևյալ սեռատարիքային բուրգը:**



1) Նոր Զելանդիային
2) Իտալիային
3) Ֆրանսիային
4) Սուդանին

33 **Գյուղատնտեսական ո՞ր մշակաբույսի տարածման շրջանն (գոտի) են հանդիսանում ԱՄՆ-ի Մեծ հարթավայրերը:**

Պատասխան՝ _____ :

34 **Լրացրեք բաց թողնված բառը:**

Այդ գետը Արագածոտնի մարզի գլխավոր ջրային զարկերակն է, որի գլխավոր վտակներից են Գեղարոտը, Ամբերդը: Գետի վրա է կառուցված Ապարանի ջրամբարը:

Այդ գետն է _____ը:

35 **Լրացրեք բաց թողնված բառը:**

ՀՀ երեք ջերմաէլեկտրակայաններն են Երևանի, Վանաձորի և _____ ջերմաէլեկտրակայանները:

36 **Որոշեք, թե ո՞ր մարզի մասին է խոսքը:**

Այդ մարզը հյուսիսից սահմանակցում է Արագածոտնի, իսկ արևելքից՝ Արարատի մարզերին: Տարածքով ՀՀ-ում ամենափոքրն է, սակայն աչքի է ընկնում բնակչության բարձր խտությամբ: Մարզում գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանը արհեստական ոռոգումն է: Մարզի տարածքում է գտնվում ՀՀ միակ ատոմային էլեկտրակայանը:

Այդ մարզն է _____ը:

37 **Հիմնավորեք, ինչո՞ւ է Կոնգո գետը ամբողջ տարվա ընթացքում ջրառատ:**

28 **Ո՞ր քամիների սխեման է պատկերված նկարում:**



Պատասխան՝ _____:

29 **Որոշեք, թե ո՞ր թերակղզու մասին է խոսքը:**

Ասիայի մեծ թերակղզիներից մեկն է, ձևավորվել է հնագույն պլատֆորմի վրա: Ունի տիպիկ մուսսոնային կլիմա: Արևելյան ափերը ողողում են Բենգալական ծոցի ջրերը: Տարածքն ամբողջությամբ զբաղեցնում է աշխարհի խոշորագույն երկրներից մեկը:

Այդ թերակղզին է _____:

30 **Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը:**

Պատասխան՝ _____:

31 **Որոշեք, թե ո՞ր երկրի մասին է խոսքը:**

Եվրոպական այդ երկրի տարածքը կազմված է մայրցամաքային, թերակղզային և կղզային մասերից: Արևելյան ափերը ողողում են Ադրիատիկ ծովի ջրերը: Բնակչության գերակշիռ մասը դավանում է կաթոլիկություն: Միջազգային զբոսաշրջության հայտնի շրջաններից է:

Այդ երկիրն է _____:

32 **Լրացրեք բաց թողնված բառը:**

Սև ծովի ափին գտնվելու շնորհիվ՝ Վրաստանի աշխարհագրական դիրքը տնտեսական զարգացման համար առավել նպաստավոր է: Այդ դիրքի շնորհիվ Վրաստանը մեծ եկամուտ է ստանում իր տարածքով բեռնափոխադրումներ իրականացնող երկրներից, այդ թվում նաև Հայաստանից, որն օգտվում է Բաթում և _____ նավահանգիստներից:

15 **Տրված երկրներից ո՞րն է ցորենի արտահանությամբ առաջատար:**

1) Նիգերը
2) Վիետնամը
3) Կանադան
4) Իսլանդիան

16 **Տրված քարտեզի վրա Արգենտինան ո՞ր տառով է նշված:**



1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

17 **Աշխարհի էլեկտրաէներգիայի արտադրության շրջանային դիագրամում 63%-ը ո՞ր էլեկտրակայաններին է բաժին ընկնում:**



1) մակընթացային
2) ատոմային
3) ջրային
4) ջերմային

18 **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Բնակչության բնական աճը բարձր է:
2) Հարավ-արևմուտքում սահմանակցում է Պորտուգալիայի հետ:
3) Դաշնային պետություն է:
4) Տնտեսությունը գտնվում է հետինդուստրիալ (հետարդյունաբերական) փուլում:

19 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Հյուսիսային Կովկասում կան հանքային ջրերի խոշոր աղբյուրներ:
2) Արևմտյան Սիբիրը նավթի, գազի արդյունահանման գլխավոր շրջանն է:
3) Կուրսկի մագնիսային անոմալիան երկաթաքարի խոշոր հանքավայրերից է:
4) Գետային բեռնափոխադրումների գերակշիռ մասը բաժին է ընկնում արևելյան շրջանների՝ դեպի հյուսիս հոսող գետերին:

20 **Ավստրալիան (Ավստրալական Միությունը) աշխարհում առաջատար է՝**

1) մարդատար ավտոմեքենաների արտահանման ծավալներով
2) ալյումինի հումքի արդյունահանման ու արտահանման ծավալներով
3) նավթամթերքների արտահանման ծավալներով
4) սուրճի արտահանման ծավալներով

21 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ տարածվում են Հայկական Տավրոսի լեռները:
2) Զբաղեցնում է մոտ 30 հազ. կմ^2 մակերես:
3) Գտնվում է Ալպ-Հիմալայան լեռնային գոտու կենտրոնական մասում:
4) Հարավ-արևելքում սահմանակցում է Փոքրասիական բարձրավանդակին:

22 **Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Տարվա տաք կեսին միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
2) Գտնվում է բարեխառն կլիմայական գոտու հյուսիսային լայնություններում:
3) Տարվա տաք կեսին հանրապետությունում տիրապետում է Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային տաք, չոր օդը:
4) Տեղումներ առավելապես լինում են հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

23 **Տրված գետերից ո՞րն է թափվում Սևանա լիճ:**

1) Ողջին
2) Հրազդանը
3) Արփան
4) Արգիճին

24 **Ընտրեք հանքաքարերի և դրանց հանքավայրերի անվանումների տրված համապատասխանությունների շարքերից ճիշտը:**

1. պղնձամոլիբդեն	ա. Սվարանց
2. ոսկի	բ. Փամբակի լեռնաշղթա
3. երկաթաքար	գ. Քաջարան
4. նեֆելինային սիենիտ	դ. Մեղրաձոր

1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

25 **Քարտեզի վրա Բազումի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված:**

1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

26 **Քարտեզի վրա Կոտայքի մարզը ո՞ր տառով է նշված:**

1) Ը
2) Ե
3) Զ
4) Է

27 **Լրացրեք բաց թողնված բառը:**

Ցամաքի բնական այն գոգավորությունը, որը լցված է ջրով և անմիջական կապ չունի ծովի կամ օվկիանոսի հետ, կոչվում է _____: